



IMAGINE EUROPE

Պատկերացրեք Եվրոպայի գաղափարական մրցույթ է, որը հրավիրում է բոլորին (անկախ տարիքից և ազգությունից) ներկայացնելու իրենց տեսլականը 2050 թվականի Եվրոպայի մասին հակիրճ գրված և տեսաձայնագրված նյութով:



Գործընկերներ

Մրցույթը ներկայացված է Եվրոպական մի շարք գործընկերների կողմից և նախնական ֆինանսավորում է ստացել Եվրամիության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:



Մասնակցության վերջնաժամկետ

28 Փետրվար 2019



Հաղթողներ

Առնվազն 5 մասնակիցներ կշահեն յուրաքանչյուրը 500 եվրո և միջազգային սեմինարի կիրավիրվեն Եվրոպայում որոշում կայացնողների և փոփոխություններ կատարողների հետ:(Հանապարհաձայնի, կացության և այլ ծախսերը հոգում է հրավիրող կողմը):Միջազգային սեմինարի ամսաթվերը կհամաձայնեցվեն և կհարմարեցվեն հաղթողների հետ:



Քվեարկություն

Հաղթողները կորոշվեն հանրության, ժյուրիի և առցանց քվեարկության միջոցով: Առցանց քվեարկությունը կազմում է 20%-ը: Հանրային քվեարկությունը կանցկացվի Եվրոպայի տարբեր քաղաքներում և կներառի 40%-ը: Ժյուրիի քվեարկությունը՝ նույնպես 40%-ը:

Ինչպե՞ս մասնակցել



Գրի՛ր 500-ից ավելի բառ պարունակող նյութ՝ «Իմ տեսլականը 2050թ.-ի Եվրոպայի մասին» թեմայով

Սկսելուց առաջ նայիր մեր՝ **«խորհուրդներ և հնարքներ»** բաժինը:

Քո պատրաստած նյութը կարող է լինել ցանկացած լեզվով: Եթե քո ընտրած լեզուն անգլերենը չէ, այդ դեպքում, խնդրում ենք հոլովակում տեղադրել ենթագրեր, կամ **դիմի ր մեզ օգնության համար:**



Տեսաձայնագրի՛ր քո գրած նյութը: Կարող ես որոշել, որ ցանկանում ես երևալ տեսանյութում, կամ կարող ես խնդրել ուրիշին ներկայացնել քո նյութը տեսանյութում, կամ, կարելի է նաև ներկայացնել այլ պատկերաներով հագեցած տեսանյութ, որը արտահայտում է քո արդեն իսկ գրված տեսլականը: Տեսանյութը պետք է տևի առնվազն 3 րոպե:



Մուտքագրի՛ր գրավոր և տեսաձայնագրված նյութերը այստեղ՝ **www.imagineurope.eu/participate:**

Եթե ենթագրեր ես ավելացրել քո տեսանյութում, խնդրում ենք մեզ ուղարկել ենթագրերով և առանց ենթագրերի տարբերակները:

Հուշումներ/ուղեցույց



Դու կարող ես ընդհանրական տեսլական ներկայացնել 2050 թվականի մեր ապագայի վերաբերյալ, կամ կաող ես ընտրել որևէ բնագավառ, որը ցանկանում ես մանրամասն ուսումնասիրել: Ինչպես օրինակ՝

- Մարդկային հարաբերություններ
- Կլիմայի փոփոխություն/ շրջակա միջավայրի պահպանություն
- Կրթություն
- Ժողովրդավարություն
- Առողջություն
- Միգրացիա
- Հանրային քաղաքականություն
- Արհեստական Ինտելեկտ
- Գենային Ինժեներիա և այլն



• Քո պատրաստած նյութում դու կարող ես օգտվել գրքերի մեր հղումների մեջբերումներից: Գրքեր կարդալը կօգնի քո նյութի համար գաղափարներ հավաքել և կարող է զարգացնել երևակայությունդ: Հետևի՛ր մեր **գրադարանին**, այնտեղ կարող ես բազում խորհուրդներ գտնել:

(Եթե օգտագործես գրքերից մեջբերումներ, ապա դրանք պետք է նշված լինեն քո նյութում: Անհրաժեշտ է հստակ նշել, որ դու մեջբերում ես անում կամ ներկայացնում ես այլ մարդու միտքը քո նյութում):



Կարող ես ուսումնասիրել մեր **գրավոր նյութերի բաժինը**: Այստեղ զետեղված հուշումները կարող են օգնել, որ քո նյութը լինի ավելի համոզիչ:



Տեսանկարահանում. Խնդրում ենք՝ օգտագործի՛ր միջին հեռավորությամբ տեսապատկեր, եթե նկարելու ես որևէ մարդու, որպեսզի ստացվի հնարավոր լավագույն արդյունքը:



Իսկ հետո՞



Առցանց քվեարկությունը բաց կլինի մինչև 2019 թվականի մարտի 25-ը:

(ամսաթվերը, հնարավոր է, փոխվեն)

Մեր ժյուրիի անդամները կգնահատեն ձեր նյութերը մինչև 2019 թվականի մարտի վերջ:

Եզրափակիչ հասած մասնակիցների նյութերը կներառվեն եզրափակիչ միջոցառման մեջ, որը տեղի կունենա 2019 թվականի ապրիլ և հունիս ամիսների միջակայքում ընկած տարբեր ժամանակահատվածներում Եվրոպական մի շարք երկրներում:

Հաղթողները կհայտարարվեն 2019 թվականի հունիսի վերջին և կհրավիրվեն միջազգային սեմինարների, որոնք կսկսեն 2019 թվականի հունիսից:

Որպես հաղթող, դու կհրավիրվես ներկայացնելու քո նյութը Եվրոպայում որոշումներ կայացնողների և փոփոխություններ նախագծողների առաջ, և հնարավորություն կունենաս նրանց հետ քննարկել քո գաղափարները:

Ընդհանուր դրույթներ և պայմաններ



Խնդրում ենք ծանոթանալ ծրագրի պայմաններին այստեղ՝

Նպատակներ



Պատկերացրո՛ւ Եվրոպան նպատակ ունի խրախուսել բոլոր տարիքի մարդկանց՝

- Մտածել Եվրոպային և աշխարհին մտահոգող հարցերի լուծումների վերաբերյալ,
- Ներդրում ունենալ Եվրամիության ապագա զարգացման գործում,
- Ներկայացնել իրենց մտքերը հզոր ձևով, որպեսզի կարողանանք խթան հանդիսանալ, որ ավելի շատ մարդիկ ներգրավվեն Եվրոպական Հանրային դաշտում:

Պատկերացրո՛ւ Եվրոպան հետագայում նպատակ ունի՝

- Ներդրում ունենալ Եվրոպական հանրային դաշտի ամրապնդմանը,
- Ամրացնել քաղաքացիների և որոշումներ կայացնողների միջև կապը,
- Խրախուսել մասնակիցներին ամրապնդել իրենց իրազեկվածությունը նախորդների կողմից կարևոր սոցիալական ձեռքբերումների վերաբերյալ և ծանոթանալ Եվրոպական և համաշխարհային կարևոր գրականությանը,
- Հնարավորություն ընձեռել երիտասարդներին կիրառել իրենց գրավոր, հոետորական և ներկայացման հմտությունները:



Պատկերացրո՛ւ Եվրոպայի Դեսպանները

- Մի շարք Եվրոպական երկրներում ավելի քան 50 երիտասարդներից բաղկացած ակտիվ խումբը կնպաստի իրենց համայնքներում մրցույթի կայացմանը և կաջակցի ծրագրի նպատակների իրականացմանը:
- Խնդրում ենք չմոռանալ և բաժանորդագրվել մեր



Հետադարձ կապ

Մեզ հետ կարող ես կապ հաստատել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝
hello@imagineeurope.eu



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union